

ARMINE KARAMYAN*1st year Master, Department of
Macroeconomics***CHANGES IN THE VOLUME OF RA FOREIGN STATE DEBT, DETERMINED BY
FLUCTUATIONS IN NOMINAL EXCHANGE CURRENCY****Keywords:** *external public debt of RA, exchange rate,
structure of RA state debt, public debt/GDP
ratio*

The influence of the nominal exchange rate on the foreign public debt has gained importance in the Republic of Armenia, especially as a result of the devaluation of the US dollar and euro exchange rates against the dram in the last year. The strengthening of the dram had a positive effect on the public debt/GDP ratio, which in 2020 and the following year also exceeded the threshold of 60%. In this work, we tried to identify the influence of the change in the nominal exchange rate of the external state debt. Based on the currency structure of the external state debt, we tried to calculate the change in the increase of the RA external state debt as a result of the change in the exchange rates of different currencies. The RA Government has set a strategic goal to increase the weight of the domestic debt to 50% of the total debt, which will have a positive effect and make public debt management more predictable, allowing to mitigate risks and provide a reserve of stability in case of future exchange rate shocks.

ԷՄՄԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ*Ֆինանսներ, բակալավրիատ, 3-րդ կուրս***ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ԻՐԱՎԻՃԱԿԻ
ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏՏ ՈԼՈՐՏԻ ՎՐԱ****Հիմնաբառեր.** *ՏՏ ոլորտ, գնաճ, COVID-19 համավարակ,
դոլարի արժեզրկում, հարկային արտոնու-
թյուններ*

*Սույն հոդվածում քննարկվել և վերլուծվել են վերջին շրջանում COVID-19 համա-
վարակով և ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված բարձր գնաճի տեմ-
պի և ԱՄՆ դոլարի արժեզրկման ազդեցությունները ՀՀ տեղեկատվական տեխնոլո-
գիաների (ՏՏ) ոլորտի վրա: Մեծավ մասամբ այս ոլորտի կազմակերպությունները
պայմանագրեր ունեն արտերկրի ընկերությունների հետ, հետևաբար անմասն չեն
միջազգային շուկայում տիրող աշխարհաքաղաքական և տնտեսական ներկայիս ազ-
դեցություններից: Ներկայացվել են ՀՀ-ում գործող ՏՏ ոլորտին վերաբերող հարկային
արտոնությունները և պետական աջակցության միջոցառումները: Նաև անդրադարձ
է կատարվել ԱՄՆ ՏՏ ոլորտի վերջին իրադարձություններին, որոնք նույնպես ազդե-
ցություն են ունեցել ՀՀ ՏՏ ոլորտի վրա:*

*Դիտարկվել է ՀՀ առաջին 100 խոշոր հարկատուների ցանկում ՏՏ ոլորտի մաս-
նաբաժինը և այդ ոլորտից պետական բյուջե հարկային մուտքերի ծավալը: Առաջարկ-
վող մոտեցումներն ուղղված են ՀՀ ՏՏ ոլորտի աջակցմանը կարճաժամկետ և երկա-
րաժամկետ հապվածում: Կարճաժամկետ հապվածում առաջարկվեց ՏՏ ոլորտին
տրամադրել սուբսիդավորված վարկեր, իսկ երկարաժամկետում նպատակահարմար*

կլինի կառավարության կողմից ներկայացված «Ինժեներական քաղաք» նախագծի իրագործումը¹:

Ներածություն: SS ոլորտը, 2000 թվականից սկսած, գտնվել է պետական քաղաքականության ուշադրության կենտրոնում, և կառավարությունը նախաձեռնել է մի շարք միջոցառումներ՝ տվյալ ոլորտի զարգացմանը խթանելու համար: Պետական աջակցությունը SS ընկերություններին տրվում է իրավական կարգավորումների և ուղղակի ֆինանսական աջակցության ճանապարհներով: Ներկայումս պետության հիմնական գործիքը SS հավաստագիրն է: Այն նպաստեց, որ տեղական և արտասահմանյան ընկերությունների մասնաբաժինները հավասարվեին, և 2015 թվականից ի վեր առաջատար դարձան տեղական սեփականություն հանդիսացող ընկերությունները: Սակայն, ներկա տնտեսական իրավիճակում սահմանված հարկային արտոնությունների տրամադրումը չի նպաստում տվյալ ոլորտի զարգացմանը, քանի որ SS ոլորտի ներուժը կազմում են միջին և խոշոր կազմակերպությունները, որոնց մասով չկան պետական աջակցության ծրագրեր: 2019 թվականից սկսած՝ համավարակի հետևանքով SS ոլորտը պահանջարկ վայելող ոլորտներից մեկն էր: Ստեղծված իրավիճակում այս ոլորտի կազմակերպություններն իրենց աշխատակիցների աշխատավարձերը բարձրացրեցին և նոր աշխատակիցներ ներգրավեցին: Իրավիճակը կտրուկ փոխվեց, երբ 2022 թ. բարձր տոկոսադրույքների և գնաճի հետևանքով SS ոլորտի կազմակերպություններն սկսեցին աշխատանքից ազատել բազմաթիվ աշխատողների: Այդ ամենին զուգահեռ ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով ԱՄՆ դոլարն արժեզրկվեց ՀՀ դրամի նկատմամբ: Եվ քանի որ ՀՀ SS ոլորտի կազմակերպություններն իրենց եկամուտը հիմնականում ստանում են արտերկրյա գործընկերներից՝ դոլարով, ուստի դոլարի տատանման հետևանքով արտահանող SS կազմակերպությունները վնաս կրեցին:

Այսպիսով, սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել ներկայիս անկայուն աշխարհաքաղաքական պայմանների ազդեցությունը ՀՀ SS ոլորտի վրա, ներկայացնել իրավիճակը տարածաշրջանի և ԱՄՆ-ի SS ոլորտում, ինչպես նաև բացահայտել ՀՀ SS ոլորտի զարգացման նախադրյալները:


Գրականության ակնարկ: Կորոնավիրուսի համավարակի ժամանակ սահմանված կարանտինը հանգեցրել է թվային աշխարհի ընդլայնմանը և հետագա զարգացմանը, որոնք ուղեկցվել են ընկերությունների աշխատանքի լայնածավալ փոփոխություններով: 2020 թ. ապրիլը և հաջորդող ամիսները ցույց տվեցին, որ ընկերությունները ժամանակի ընթացքում կիրառում էին տեխնոլոգիաներ, որոնց ներդրումը նորմալ պայմաններում կպահանջեր մի քանի տարի: Ակնկալվում է, որ այս զարգացումը զգալի և երկարատև ազդեցություն կունենա առցանց աշխատանքի, առցանց կրթության, առցանց գնումների, առցանց բժշկության և առցանց ժամանցի վրա²: Յ. Մաուերերն իր աշխատանքում նշում է, որ IT-Service-Management-ը SS ոլորտի կարևոր ռազմավարական թեման է: Համավարակի հետևանքով բազմաթիվ կազմա-

¹ ՀՀ Կառավարության 16.07.2020 թ. որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=144660>

² St' u Schwab K., Malleret T., Covid-19 the great reset. 2020, էջ 62, <http://reparti.free.fr/schwab2020.pdf>

կերպություններ կենտրոնացված կորպորատիվ կառավարման կառուցվածքից անցել են ապակենտրոնացված կառուցվածքի, որը ենթադրում է առցանց աշխատանք: Հարցված ընկերությունների 20,7%-ն իր SS բյուջեն ավելացրել է համաճարակի հետևանքով¹: Ս. Պարսյանն իր հոդվածում անդրադառնում է ռուս-ուկրաինական պատերազմի բացասական ազդեցություններին ՀՀ ոլորտների վրա և որպես հնարավորություն դիտարկում է SS ոլորտը, քանի որ հայաստանյան շուկայում հատկապես SS ոլորտում տեղի ունեցավ միգրացիա²:

Վերլուծություն: ՀՀ-ում 2020 թ.՝ մինչև 44-օրյա պատերազմը, մի շարք ոլորտներում տնտեսական աճ էր դիտարկվում, սակայն պատերազմից հետո, ինչպես համանման դեպքերում, տնտեսության աճի տեմպը դանդաղեց, և 2021 թվականից մեկնարկեց տնտեսության վերականգնողական փուլը: Սակայն, 2022 թ. փետրվարին սկսված ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների բացասական ազդեցություններով պայմանավորված, նկատվեց ՀՀ տնտեսական աճի տեմպերի դանդաղեցում: Նույն թվականի ապրիլ ամսից ծառայությունների, առևտրի և շինարարության ոլորտների աճի տեմպերն արագացան, ինչը նպաստեց տնտեսության աճի տեմպի վերականգնմանը: Գծապատկեր 1-ը ներկայացնում է, թե ՀՆԱ-ի մեջ յուրաքանչյուր տնտեսության ճյուղ ինչ չափով է աճ գրանցել: Նկատելի է հիմնականում ծառայությունների աճը (10.8 տոկոսային կետ)՝ պայմանավորված գերազանցապես ֆինանսական, ապահովագրական, տեղեկատվության և կապի, կացության և հանրային սննդի կազմակերպման զգալի առաջընթացով: Ծառայությունների ճյուղն ընդգրկում է նաև SS ոլորտը, որը նույնպես անմասն չմնաց աշխարհում տեղի ունեցող տնտեսական ճգնաժամից:




Գծապատկեր 1. Տնտեսության ճյուղերի իրական աճը՝ ըստ ամիսների³

¹ Տե՛ս **Mauerer J.**, Studie IT service management. 2021, էջ 14, https://shop.computerwoche.de/files/2104/916192510673198/itsm_2021_inhaltsverzeichnis_sundleseprobe.pdf

² Տե՛ս **Ս. Պարսյան**, Ռուս-ուկրաինական պատերազմի տնտեսական դիսկերն ու հնարավորությունները Հայաստանի համար, <https://evnreport.com/arm/economy-arm/economic-implications-of-the-russian-ukrainian-war/>

³ Աղբյուրը՝ 2023-2025 թթ. ՄԺԾԾ, https://www.minfin.am/hy/page/petakan_mijnazhamket_tsakhseri_tsagreg/

SS ոլորտը ստեղծված իրավիճակում պահանջված ոլորտներից էր: Պատճառներից մեկն այն էր, որ այդ ժամանակաշրջանում աճեց հեռավար աշխատողների թվաքանակը: Հետևաբար, ձեռնարկությունները մեծ թվով համակարգիչներ էին գնում, SS ոլորտի ծառայություններից էին օգտվում (Cloud-Computing, Online-Marketing, E-Commerce), Zoom-ի բաժանորդագրություն էին գնում, որպեսզի ապահովեն իրենց աշխատակիցների հեռավար աշխատանքը. այս ամենի պատճառով էլ կազմակերպություններում գրանցվեց տեխնոլոգիական արտադրանքի ծախսերի աճ: Միջազգային շուկայում SS ոլորտի միջին և խոշոր կազմակերպությունները, նկատելով պահանջարկի կտրուկ աճը իրենց ներկայացրած արտադրանքների նկատմամբ, կարծում էին, որ շուկայական այս իրավիճակը երկար կտևի, հետևաբար իրենք էլ իրենց հերթին կատարեցին ծախսեր, խոշոր ներդրումներ իրականացրին և նոր աշխատողներ ներգրավեցին: Այդ ամենին զուգահեռ համավարակի հետևանքով ամբողջ համաշխարհային տնտեսությունում անախադեպ գնաճ էր դիտարկվում հատկապես ԱՄՆ-ում: SS ոլորտի կազմակերպությունները, հաշվի առնելով գնաճի բարձր տեմպը, բարձրացրին իրենց աշխատակիցների աշխատավարձը այն նպատակով, որ իրենց մասնագետները այլ գործատուի չնախընտրեն: Գնաճը զսպելու նպատակով, որն ԱՄՆ-ում 2021 թ. հասել էր 7%-ի (1980-ականներից մինչ օրս գրանցված ռեկորդային ցուցանիշ, զճապատկեր 2)¹, ԱՄՆ Դաշնային ռեզերվը (Federal Reserve System, ոչ պաշտոնական կրճատ անվանումը՝ Fed) մայիսի սկզբին 0,5%-ով բարձրացրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը:



Գծապատկեր 2. Տարեկան գրանցված գնաճը ԱՄՆ-ում

Այնուհետև, որոշ ժամանակ անց սկսվեց շուկայից ամսական մոտ 20 մլրդ ԱՄՆ դոլարի դուրս բերումը: Համաձայն ամերիկյան ֆինանսական իշխանությունների հայտարարությունների՝ ժամանակի ընթացքում այդ գումարը հասնելու է ամսական 90 մլրդ ԱՄՆ դոլարի: Նախատեսվում է ֆինանսական շուկայից հանել 2-2,5 տրիլիոն ԱՄՆ դոլար՝ կորոնավիրուսի համավարակի շրջանում տնտեսությանն աջակցելու նպատակով տպագրված և զրո-

¹ ՀՀ-ում այդ նույն ժամանակաշրջանում գնաճը հասել էր 7.2%-ի:

յական տոկոսադրույքով շուկայում հայտնված դոլարային զանգվածի կեսը: Երբ համավարակը մեղմացավ, շուկայում իրավիճակը փոխվեց, և SS ոլորտի կազմակերպությունների կատարած ծախսերը սպասվելիք եկամուտները չապահովեցին: 2022 թ. վերջից սկսած՝ SS ոլորտի այնպիսի խոշոր կազմակերպություններ, ինչպիսիք են Amazon-ը, Microsoft-ը, Meta-ն, Google-ը, սկսեցին խզել պայմանագրերն իրենց աշխատակիցների հետ: Meta-ն առաջին խոշոր ընկերությունն էր, որը 2022 թ. նոյեմբերին հայտարարեց զգալի կրճատումների մասին և արդյունքում կրճատեց իր անձնակազմը 13%-ով: Հիմնական գործոնները, որոնք նպաստեցին SS ոլորտի աշխատողների կրճատմանը, COVID-19 համավարակն էր, գնաճը և բարձր տոկոսադրույքները: Արդյունքում SS ոլորտի մյուս խոշոր կազմակերպությունները ևս վերանայեցին իրենց ռազմավարական ծրագրերը և աշխատանքից ազատեցին բազմաթիվ աշխատողների, քանի որ վերջին շրջանում ուռճացված էր թե՛ աշխատողների թվաքանակը, թե՛ աշխատավարձերի չափը: Վիճակագրական տվյալների համաձայն՝ 2022 թվականից մինչև 2023 թ. առաջին եռամսյակը SS ոլորտում աշխատանքից ազատվել է շուրջ 240.000 աշխատակից:

Նշված խնդիրների հետ բախվել է նաև ՀՀ SS ոլորտը: Այս ոլորտի կազմակերպությունները հիմնականում պայմանագրեր ունեն արտերկրի ընկերությունների հետ և դոլարով են գումար ստանում, իսկ իրենց աշխատողներին վճարում են դրամով: Իրավիճակն ավելի հստակ և համակողմանի պատկերացնելու համար նախ անհրաժեշտ է հասկանալ Հայաստանում SS ոլորտի ընդհանուր պատկերն առհասարակ: Ընդհանրական առումով, այն բաղկացած է երկու տեսակի ընկերություններից՝ «արտադրող», որոնք ստեղծում են արտադրանք և վաճառում միջազգային շուկայում և «ծառայություն» տեսակի, որոնց արտասահմանյան ընկերություններն *աութսորս* են անում (արտապատվիրում են) ընդհանուր նախագծի ինչ-որ հատված: Արտապատվիրման դեպքում կարևորն այն է, որ գին-որակ հարաբերակցությունը գոհացնող լինի: Ժամանակի ընթացքում գին-որակ հարաբերակցությամբ Հայաստանն իր ուրույն տեղն է գրավել շուկայում, թեև ամենամատչելին չէր: Տեխնոլոգիական արդյունաբերությունը 2021 թ. կազմել է Հայաստանի ընդհանուր ՀՆԱ-ի 4%-ը: Այս ցուցանիշը մինչև 2018 թվականը դինամիկ աճ է գրանցել, որին հաջորդող տարիներին, կապված COVID-19 համավարակի հետ, նվազման միտում է ունեցել: 2021 թ. SS ոլորտի շրջանառությունը կազմել է 167,7 մլրդ ՀՀ դրամ, որը, նախորդ տարվա ցուցանիշի համեմատ, աճել է 18%-ով, իսկ 2017 թ. եղել է ընդամենը 75,4 մլրդ: Այսինքն, շրջանառությունը կրկնապատկվել է 2021 թ. դրությամբ, որից էլ բխում է, որ SS-ն դինամիկ զարգացող ոլորտ է: ՀՀ SS ոլորտը միջինում տարեկան 20% աճ է գրանցում, ինչը կարող ենք համեմատել ընդհանուր տնտեսության զարգացման աճի հետ, որը կազմում է ընդամենը 3-4%:



Գծապատկեր 3. SS ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում

«Արտադրող» ընկերությունները, որոնք պետք է փորձեն վաճառքը Հա-յաստանից իրականացնել, դուրսի փոխարժեքի 20% փոփոխության դեպքում 20%-ով նվազ եկամուտ կստանան: «Ծառայություն» տեսակի ընկերություն-ների վիճակը շատ ավելի ծանր է: Մարժան, որի հիման վրա նրանք գումար են վաստակում, սովորաբար շատ մեծ չի կարող լինել, որովհետև հակառակ դեպքում նրանք կկորցնեն իրենց մրցակցային առավելությունը: Ու այդ մար-ժան սովորաբար 20%-ից էլ պակաս է լինում:

Մինչև ՀՀ դրամի արժուրդվելը, օրինակ, արտերկրից ստացված 1000 ԱՄՆ դոլարը փոխանակելուց հետո կազմում էր մոտ 480 հազար ՀՀ դրամ: ՀՀ օրենսդրության համաձայն՝ աշխատավարձի, հարկերի վճա-րում, տարածքի վարձակալության վճար և այլն, կատարվում են ՀՀ դրա-մով: Այդ նույն 1000 ԱՄՆ դոլարը 2022 թ. վերջից մինչև 2023 թ. ընթացիկ ժամանակաշրջանը մոտ 400 հազար ՀՀ դրամ է կազմում¹: SS ընկերու-թյուններում գերակշռող ծախսերն են աշխատավարձերի և հարկերի վճարումները: Ստացվում է, որ ամբողջ հասույթը, որը նվազել է 20%-ով, ստիպում է, որ ընկերությունը վնասով աշխատի կամ էլ արտադրանքը ավելի թանկ վաճառի, ինչն էլ իր հերթին առաջ է բերում խնդիրներ՝ կապված շու-կայում մրցակցությանը դիմակայելու հետ:


Վերջին 3 տարիներին շուկայում կատարվող իրադարձությունները հնա-րավոր չէր նախապես կանխատեսել և հաշվի առնել, թե ինչ չափով կվնասի ոլորտներին: Ինչպես նշել էինք, համաշխարհային շուկայում խոշոր SS ոլոր-տի կազմակերպությունները վերանայել են 2022 թ. վերջին իրենց ռազմավա-րական ծրագրերը: Այդ նույն գործընթացը տեղի է ունեցել նաև ՀՀ SS ոլոր-տում: **Որպես ժամանակավոր լուծում՝ ՀՀ SS ոլորտի որոշ կազմակերպու-թյուններ կրճատեցին անձնակազմը և նվազեցրին այն ծախսերը, որոնք ուղղված են աշխատակիցների զարգացմանը, համակարգիչների նորաց-մանը, գույքի և հարմարավետության բարելավմանը:**

Ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով օտարերկրյա SS ոլորտի շատ կազմակերպություններ փոխեցին իրեն գործունեության հասցեն՝ գալով ՀՀ², սակայն տարածաշրջանի մյուս երկրներում այդ ընթացքում մշակվեցին

¹ Տե՛ս դոլար-դրամ փոխարժեք, տվյալները՝ ՀՀ ԿԲ պաշտոնական կայքից:

² Գծապատկեր 4-ում ներկայացված են տեղափոխված կազմակերպությունների մի մասը:

SS ոլորտին վերաբերող պետական աջակցության ծրագրեր, ինչի հետևանքով էլ նկատվում է օտարերկրյա կազմակերպությունների արտահոսք դեպի հարևան երկրներ: Օրինակ, ՀՀ SS ոլորտի այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են DataArt-ը, South Tech Consulting-ը և այլն, ունեն մասնաճյուղեր Վրաստանում, որտեղ գործում են SS ոլորտի համար նախատեսված հարկային արտոնություններ: Դրանք ազդում են թե՛ ստարտափ, թե՛ խոշոր ընկերությունների վրա, հետևաբար, որոշ դեպքերում, մասնաճյուղերից ստացված եկամուտների տեսակարար կշիռը ավելի մեծ է լինում, քան ՀՀ-ից ստացվողը:




Գծապատկեր 4. Ռուսաստանից տեղափոխված աշխատողների ներգրավվածությունը Հայաստանի SS ոլորտում

SS ընկերություններից շատերը հետևում են ընդհանուր օրինաչափությանը. կա՛մ գրանցված են Հայաստանից դուրս՝ ավելի բարենպաստ ներդրումային միջավայր ունեցող երկրներում, կա՛մ հիմնականում սպասարկում են միջազգային շուկան՝ իրենց արտադրանքը հարմարեցնելով օտարերկրյա հաճախորդներին: Այդ իսկ պատճառով դեռևս 2000 թ. կառավարության կողմից մշակվում էին SS ոլորտի զարգացման ծրագրեր: Պետական աջակցությունը SS ընկերություններին տրվում է իրավական կարգավորումների և ուղղակի ֆինանսական աջակցության ճանապարհներով: Կառավարության կողմից բազմիցս նշվել է, որ SS-ն Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական ոլորտ է:

2015 թվականից սկսած՝ ՀՀ SS ոլորտը խթանելու համար պետության հիմնական գործիքը SS հավաստագիրն է, որի միջոցով տնտեսավարող սուբյեկտները հարկային արտոնություններ են ստանում՝ կապված շահութահարկից ազատման և եկամտային հարկի 10% սահմանման հետ (20% հաստատագրված հարկի համեմատ, որը վերաբերում է բոլորին): Հավաստագրման կարող են դիմել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող մինչև 30 աշխատակից ունեցող սկսնակ առևտրային կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը՝ պետական գրանցման պահից սկսած 3 ամսվա ընթացքում: Մինչև 2015 թվականը SS ոլորտի եկամուտները հիմնականում գոյանում էին օտարերկրյա ընկերությունների կողմից (օտարերկրյա քաղաքացիների կամ իրավաբանական ան-

ծանց առնվազն 51% սեփականություն ունեցող ընկերություններ): 2015 թ. տեղական և արտասահմանյան ընկերությունների մասնաբաժինը հավասարվեց, և այդ ժամանակից ի վեր առաջատարի դերը ստանձնեցին տեղական սեփականություն հանդիսացող ընկերությունները: Փոփոխության հիմնական դրդապատճառներից մեկը SS ոլորտի ընկերություններին հարկային արտոնություններ տրամադրող օրենքն էր: 2022 թ. մարտի վերջին ընդունվեց նոր օրենք, ըստ որի՝ սահմանվում էր եկամտահարկի 50% վերադարձ SS այն ընկերությունների համար, որոնք պետական աջակցության տրամադրման համապատասխան ամսվա՝ աշխատանքային և աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրերով ներգրավված աշխատողների թվաքանակն ավելացրել են առնվազն 50-ով¹:

Այժմ անհրաժեշտ է վերլուծել, թե ինչքանով է արդյունավետ ՀՀ SS ոլորտին, այլ ոլորտների համեմատ, հարկային արտոնություններ տրամադրելը: Չէ՞ որ ՀՀ տնտեսությունը դեռևս մեծապես կախված է հանքարդյունաբերությունից և ծխախոտ արտադրող ընկերություններից, որոնք երկրի խոշորագույն հարկատուներից են:



Գծապատկեր 5. Հանքարդյունաբերության և SS ոլորտի մասնաբաժինները հարկային մուրքերում²

Դիտարկելով ՀՀ առաջին 100 խոշոր հարկատուների ցանկը՝ կնկատենք, որ առաջին SS ոլորտի կազմակերպությունը 18-րդ տեղում է՝ Սոֆթ Կոնստրակտը, իսկ ավելի բարձր հորիզոնականներում գերակշռում են հանքարդյունաբերության և ծխախոտի արտադրությամբ զբաղվող ընկերությունները: 2022 թ. տարեվերջին առաջատար SS հարկատուների եռյակում են հայտնվել Սոֆթ Կոնստրակտը (10,8 մլրդ ՀՀ դրամ), Դիջիթեյնը (5,6 մլրդ ՀՀ դրամ) և Սինոփսիս Արմենիան (4,5 մլրդ ՀՀ դրամ): Գծապատկերից կարող ենք եզրակացնել, որ առաջին 100 խոշոր հարկատուների ցանկում ներառված հանքարդյունաբերության ոլորտից պետությունը մուտքերը կազմել են

¹ Աղբյուրը՝ <https://petekamutner.am/mdNews.aspx?sid=src&nid=8911>

² Գծապատկերը կազմել է հեղինակը, տվյալները՝ ՀՀ ՊԵԿ-ի պաշտոնական կայքէջից:

191,2 մլրդ ՀՀ դրամ, որի համեմատ SS ոլորտից եղել է 24,9 մլրդ (86%-ով պակաս): Թեև հանքարդյունաբերության ոլորտը հարկային մուտքերի գերակշիռ մասն է ապահովում, այնուհանդերձ չպետք է անտեսենք այն, որ SS ոլորտի համեմատ հանքարդյունաբերությունը բացասական ազդեցություն ունի էկոլոգիայի վրա՝ օդի, ջրի, հողի աղտոտում, զանգվածային ծառահատում, ինչն էլ, իր հերթին, հսկայական վտանգներ է պարունակում մարդկանց կյանքի ու առողջության համար:

Եզրակացություն: Ներկայիս իրավիճակը գնահատելով՝ կարող ենք հետևյալը դիտարկել. ՀՀ խոշոր հարկատուների ցանկում առաջատար է հանքարդյունաբերությունը, ՀՀ-ում բնական ռեսուրսները քիչ են և սահմանափակ, էկոլոգիայի վրա հանքարդյունաբերության ազդեցությունը բացասական է, հետևաբար արդարացված է պետության կողմից SS ոլորտին աջակցության տրամադրումը, քանի որ այն ավելի ճկուն է, նորարար ու գիտելիքահենք: Սակայն, ինչպես նշեցինք, ներկայիս գործող հարկային արտոնություններն ազդում են միայն ստարտափների վրա: Եվ այս դեպքում առաջարկում ենք կարճաժամկետ պետական աջակցություն տրամադրել ոլորտի բոլոր կազմակերպություններին: Ստեղծված տնտեսական նոր, անընդհատ փոփոխվող իրավիճակում ընկերություններին անհրաժեշտ է ժամանակ, որպեսզի վերանայեն իրենց ռազմավարական ծրագրերը և գնահատեն ռիսկերը: Կարող ենք առաջարկել նաև հետևյալը. SS ոլորտի կազմակերպություններին տրամադրել սուբսիդավորված վարկեր: Այս տեսակի վարկերը կարելի է ներդրումներ համարել: Իսկ որպես երկարաժամկետ լուծում նպատակահարմար կլինի «Ինժեներական քաղաք» ծրագրի իրականացումը, որի արդյունքում նախատեսվում է ստեղծել նոր ձևաչափի էկոհամակարգ, որտեղ ինժեներական և բարձր տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունները հնարավորություն կունենան արդիական ենթակառուցվածքների կիրառմամբ մշակել և իրագործել նորարարական գաղափարներ՝ տեղական ու միջազգային շուկաների համար:

Անդրադառնալով աշխարհում տիրող ճգնաժամերին, պատերազմներին, որոնց հետևանքով համաշխարհային տնտեսության շատ ճյուղեր անկում են ապրում, եզրակացնում ենք, որ SS ոլորտը համեմատաբար ավելի ճկուն է: Այն ներկայիս և ապագայի պահանջարկ վայելող ոլորտներից է և երիտասարդներին հնարավորություն է տալիս լավ աշխատանքային միջավայրում և բարձր աշխատավարձով աշխատանք ունենալ: Այն նպաստում է մարդկանց և բիզնեսի փոխգործակցության աշխուժացմանը և այն ավելի արդյունավետ դարձնում:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ օրենքը «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին»՝ ընդունված 17.12.2014 թ., հոդված 11, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=138979>
2. Պարսյան Ս., Ռուս-ուկրաինական պատերազմի տնտեսական ռիսկերն ու հնարավորությունները Հայաստանի համար, <https://evnreport.com/arm/economy-arm/economic-implications-of-the-russian-ukrainian-war/>
3. 2023-2025 թթ. ՄԺԾԾ, <https://www.minfin.am/hy>
4. Schwab K., Malleret T., Covid-19 the great reset. 2020, <http://reparti.free.fr/schwab2020.pdf>

5. Mauerer J., Studie IT service management, 2021,
https://shop.computerwoche.de/fileserver/files/2104/916192510673198/itsm_2021_inh_altsverzeichnisundleseprobe.pdf
6. <https://armstat.am/am/?nid=12&id=01510>
7. <https://www.cba.am/>
8. Fed: <https://www.federalreserve.gov/>
9. <https://www.forbes.com/sites/qai/2023/01/27/why-are-tech-companies-laying-off-all-these-workers/?sh=30be8d5e4fc6>
10. <https://petekamutner.am/mdNews.aspx?sid=src&nid=8911>

ЭММА НЕРСИСЯН

Финансы, бакалавриат, 3-й курс

ВЛИЯНИЕ ТЕКУЩЕЙ ГЕОПОЛИТИЧЕСКОЙ СИТУАЦИИ НА СФЕРУ ИТ В РА

Ключевые слова: ИТ-сектор, инфляция, пандемия COVID-19, девальвация доллара, налоговые льготы

В данной статье обсуждалось и анализировалось влияние высоких темпов инфляции и девальвации доллара на сферу информационных технологий РА (далее – ИТ) в связи с недавней пандемией COVID-19 и российско-украинской войной. В большинстве случаев организации этой сферы имеют соглашения с зарубежными компаниями, следовательно, не остаются в стороне от происходящих на международном рынке геополитических и экономических факторов. Были представлены налоговые льготы и меры государственной поддержки действующей в РА сферы ИТ. В статье были затронуты последние события в ИТ-сфере США, которые также оказали влияние на сферу ИТ РА.

Была рассмотрена доля сферы ИТ в списке первых 100 крупных налогоплательщиков РА и рассчитан объем налоговых поступлений из сферы ИТ в госбюджет. Предлагаемые подходы направлены на поддержку ИТ-сферы РА в краткосрочной и долгосрочной перспективе. В краткосрочной перспективе было предложено предоставить ИТ-сфере субсидированные кредиты, а в долгосрочной перспективе целесообразным будет реализация представленного правительством проекта «Инженерный город».

EMMA NERSISYAN

3rd year Bachelor, Department of Finance,

IMPACT OF CURRENT GLOBAL POLITICAL CONDITIONS ON RA IT INDUSTRY

Keywords: IT sector, inflation, COVID-19 pandemic, dollar devaluation, tax benefits

In this article, the effects of the recent COVID-19 pandemic and the high inflation rate caused by the Russian-Ukrainian war and the devaluation of the dollar on the RA information technology (hereinafter, IT) sector have been discussed and analyzed. In most cases, organizations in this field have agreements with foreign companies, consequently, they do not remain apart from the geopolitical and economic factors prevailing on the international market. We presented the tax benefits and state support related to the IT sector operating in the Republic of Armenia. Also, reference was made to the latest events in the US IT sector, which also had an impact on the RA IT sector.

The share of the IT sector in the list of the top 100 major taxpayers of the Republic of Armenia was considered and the volume of tax revenues from the IT sector to the state budget was calculated. The proposed approaches are aimed at supporting the IT sector of the Republic of Armenia in the short and long term. In the short term, it was proposed to provide subsidized loans to the IT sector, and in the long term, it would be advisable to implement the Engineering City project presented by the government.

ՍԱԹԵՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տնտեսագիտություն,
բակալավորիա, 4-րդ կուրս

ՊՐԻՆՑԻՊԱԼ-ԱԳԵՆՏ ՄՈԴԵԼԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐ

Հիմնաբառեր. գործակալության տեսություն, ագենտ/գործակալ, պրինցիպալ, ասիմետրիկ տեղեկատվություն, նպատակների կոնֆլիկտ, գործակալության կորուստ, տնտեսական անարդյունավետություն

Պրինցիպալ-ագենտ մոդելը, ինչպես նաև գործակալության տեսությունը, մեկ միասնական հարթակում են համախմբում տնտեսագետներին, քաղաքագետներին, սոցիոլոգներին, իրավաբաններին և նույնիսկ մաթեմատիկոսներին: Թեմայի ընդգրկումն լինելու փաստից ելնելով՝ հոդվածի շրջանակներում անդրադարձ է կատարվել ագենտ-պրինցիպալ խնդիրների այն դրսևորումներին, որոնք առնչվում են տնտեսական և քաղաքական ոլորտներին, զգալի ազդեցություն են ունենում տնտեսության արդյունավետության վրա և խոչընդոտ են հանդիսանում տվյալ ոլորտի զարգացման համար: Հետազոտելով մի շարք հոդվածներ և աշխատություններ տնտեսական հիմնախնդիրների վերաբերյալ և ուսումնասիրելով առաջադրվող լուծման տարբերակները՝ հանգել ենք այն եզրակացության, որ հիմնախնդիրներն ամբողջովին լուծել, իհարկե, հնարավոր չէ, բայց կարող ենք նվազեցնել դրանց ազդեցությունը հասարակական և տնտեսական կյանքի վրա:

Ներածություն: Ներկայումս հասարակական հարաբերությունների շատ հիմնախնդիրներ այնպես են ներխուժել մեր առօրյա, որ երբեմն չենք գիտակցում դրանց խնդրահարույց լինելը, օրինակ՝ գործակալության տեսության՝ պրինցիպալի և ագենտի/գործակալի միջև խնդիրները: Ընդ որում, այս մասին խոսվել է՝ սկսած 1930-ական թվականներից, և այն արդիական է մինչ օրս: Գործակալության տեսության հիմնախնդիրներն արդիական են տնտեսական, սոցիալական, քաղաքական, ապահովագրական, իրավաբանական ոլորտներում, և, հետևաբար, հենց այս ոլորտի մասնագետներն են երկար ժամանակ անդրադարձել դրանց՝ փորձելով գտնել լուծումներ: Գործակալության թեորեմը դիադային հարաբերությունների մասին է, որտեղ մի կողմը (պրինցիպալը) լիազորում է մյուսին (գործակալին) գործել իր անունից կամ հանձնարարում է որոշակի աշխատանք: Ըստ իրավաբանների՝ իր ամե-